քը 2,4 մետր. հյուսիսից հարավ տաճարի լայնքն է 5 մ., հարավային կողը 2,32 մետր, 1,92 մ. խորությամբ, իսկ հյուսիսայինը 2,45 մ., 1,15 մ. խորությամբ։ Արևմտյան թևի բացվածքը 2,45 մ., խորությունը 1,15 մ., անկյունից մինչև դուռը 0,49 մ., դրան բացվածքը 0,95 մետր։ Յերկրորդ վիմափորի կամ ժամատան յերկարությունն է 6,98 մ., իսկ լայնքը 6,63 մ., սա ևս յերդիկ ունի փոքր կիսագմբեթով։ Այս վիմափորները Գեղարդի Պռոշի տաճարների վսեմությունն ու արվեստը չունին, բայց աննշան չեն։

Գեղարվեստական տեսակետից ավելի արժեքավոր է Մատթեոս վարդապետի ճաշակի և շնորհքի մասին գաղափար է տալիս նրա ավետարանի մանրանկարչությունը։ Ավետարանը զարդարված է սկզբում խորան-

Ձեռ. Եջմ. Ն. 8. № 1669. Պատկ 57.

ներով, և ապա ավետարանիչների պատկերներով և սկզբնազարդերով։ Խորանների մեջ ուշադրության արժանի յեն հայկական խոյակների վերա հաստատված պայտաձև կամարները և նրանց կողքերի զարդարանքները, սիրամարգներ, թռչուններ, բուսական զարդեր, վորոնք զուտ արևելյան բնույթ ունին, պարզ գույներով, առանց վոսկու գործադրության։ Պատկերների մեջ վոսկու փոխարեն նիմբուսի համար գործադրում է դեղին գույնը։ Մատթեոս վարդապետը շատ է սիրում հատկապես սիրամարգը, վոչ միայն մեր ցուցադրած պատկերի (57) մեջ, այլ և խորանների կողքերին, պես պես վոճավորությամբ և մեր հին ավետարաններին հատուկ ձևով։ Բայց կան բուսական զարդարանքներ ևս, վորոնք, գրեթե նույնությամբ կրկնված ենք տեսնում պարսկական նոր գորգագործության մեջ։ Մատթեոս վարդապետի խորանների արվեստը հին ավանդի հետևողություն է, նշանակական, և վոչ յուր ժամանակի ստեղծագործություն։ Սիրամարգների պարանոցին մեծ ողակ կամ մանյակ է ձգված, յերբեմն փաթաթված իբար վզի, ինչպես և սասանյան արվեստի մեջ թռչունների վերաբերությամբ։

Ավետարանների պատկերագրության մեջ ևս ունի յուր ուրույն կողմերը. ավետարանիչներն անկախ չեն ներշնչվում և գրում իրենց ավետարանները, այլ նրանք իրենց գրիչներն ունին, վորոնց թելադրում են, վոր սովորական է միայն Հովհաննեսի և Պրոխորոնի համար։ Վորպես հազվագյուտ յերևույթ մանրանկաչության պատմության մեջ ունինք նման բան Մարկոսի և Ղուկասի համար Reims-ի շրջանում Թ—Ժ. դարում ծագած մի ավետարանի մեջ, վորտեղ Պետրոս առաքյալը թելադրում է Մարկոսին գրել յուր ավետարանը, իսկ Ղուկասին Պողոսը, վորոնց աշակերտներն են ըստ ավանդության այդ յերկու ավետարանիչները*. մեզանում Մարկոսի վերաբերությամբ ունինք Հեթումի Աստվածաշնչի մեջ**։ Բայց Մատթեոսի նկատմամբ վոչ միայն անհասկանալի յե այդ, այլ և այստեղ Յովհաննու Պրոխորոնը մորուքավոր է, հակառակ ընդունված ավանդության, մինչդեռ մյուս ավետարանիչների գրիչները, բոլորն անբեղ և անմորուք յերիտասարդներ են։ Այս հանգամանքն ի նկատի ունենալով, կարծում ենք, վոր Մատթեոս վարդապետը վոչ թե հին ավանդության հետևողությամբ Պետրոսին կամ Պողոսին է նկարում, վորպես իրենց աշակերտ ավետարանիչներին թելադրողներ, այլ Հոհաննու և Պրոխորոնի հետևողությամբ բոլոր ավետարանիչներին վորպես թելադրողներ իրենց գրիչներին։

Մեր մանրանկարչության մեջ ընդհանրապես պատկերագրությունը թույլ և զարդագրության համեմատությամբ. Մատթեոս վարդապետն ընդհակառակ ավելի ուժեղ է պատկերագրության մեջ, դեմքի, շարժումների իրական և կենդանի արտայայտությամբ, բոլորաձև և թավ մորուքով, գլխի մազերի ուրույն սանրվածքով, կողքերից դեպի հետ, իսկ ճակատին վերից վար, թելթել, վոր նկատվում է ասորականի հետ աղերս ունեցող մեր հին քանդակագործության մեջ, Պողավանքի հարավային պատին, Զ. դարու առաջին կիսի գործ։ Դեմքերը նույնպես բոլորակ են և կանոնավոր, աչքերը կենսալից. դիմագծերի կոնտուրները շեշտված սև բծերով, յատկապես սկզբնազարդերի պարիկների դեմքին, վոր նկատվում է նաև ժամանակակից բյուզանդական արվեստի մեջ[1]։

* Beissel. Geschichte der Evang. Bücher. Freiburg im Breisgau. *1906. 202։*

** *Ձեռ. Էջմ. № 180։*

1 Beissel. Gesch. der Ev. Bücher. *48.*